

**ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ
ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՏ ՌԵԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ**

Բառը գեղարվեստական խոսքում, բացի անվանողական դերից, ունի նաև ավելի լայն՝ ռճական գործառույթ: Խոսքի արտահայտչականությունը, հուզականությունը, ընթերցողի վրա ազդելու, ներգործելու, համապատասխան զգացմունքներ առաջացնելու գեղագիտական գործառույթը շատ հաճախ պայմանավորված է դիպուկ գտնված ու տեղին գործածված բառով: Հաճախ էլ նման ռճական դերով համդես են գալիս հեղինակային նորակազմությունները՝ բառային միավորներ, որոնք հեղինակի յուրօրինակ, ինքնատիպ լեզվամտածողության ու աշխարհընկալման արդյունքն են: Ի տարբերություն համալեզվական նորաբանությունների, որոնք ստեղծվում են նոր երևան եկած հասկացությունների համար համապատասխան լեզվական նշանը ստեղծելու նպատակով, հեղինակային նորակազմությունները հաղորդակցական գործառույթով պայմանավորված անհրաժեշտություն չեն:¹ Վերջինները ստեղծվում են բոլորովին այլ գործոնների հետևանքով: Գրողը բառ է կազմում ոչ միայն նոր հասկացություն անվանելու, այլև իր ցանկացած ձևով կամ նորովի իմաստավորելու, մեկնաբանելու երևույթը, իրողությունը, ինչպես նաև ուրույն վերաբերմունք դրսևորելու նպատակով:

Հեղինակային նորակազմությունները որպես կանոն ռճականորեն լիցքավորված միավորներ են՝ օժտված ազդեցության զգալի ուժով: Նոր բառերն ինքնին ուշագրավ երևույթ են. բացի գրողի խոսքի էությունը ցանկալի ճշտությամբ ու բազմակողմանիորեն արտացոլելուց, նաև գրավում են իրենց թարմությամբ ու անսովորությամբ: Ուստի և հենց միայն նորակազմ բառի առկայությունը արտահայտչաձևը, մտքի հաղորդման եղանակը դարձնում է առավել տպավորիչ:

¹ Տե՛ս Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., էջեր 182-185:

Նորակազմությունները գրողի խոսքում կատարում են մի շարք ռեական գործառնություններ: Դրանցից մեկը, թերևս հիմնականը, որ ուղեկցում է նաև այլ ռեական շարժառններով ստեղծվածներին, նորակազմ բառի գործածությամբ խոսքի սեղմության, ձևակերպման կառուցիկության ապահովումն է:

7. Մաթևոսյանի նորակազմությունների զգալի մասը այնպիսի բարդություններ են, որոնք փոխարինում են համապատասխան բառակապակցություններին, ինչպես՝ գյուղամուտ (գյուղ մտնելը), աղբրագլուխ (աղբյուրի գլուխ), մատնակոճ (մատի կոճ), կավճաբիծ (կավճի բիծ), մեղվատեր (մեղվի տեր), ալրապարկ (ալյուրի պարկ), մրջնաշար (մրջյունների շարան) այլն: Առավել հաճախված կառուցվածքային տիպեր են նորակազմ մակբայները՝ անհասկացողաբար, բանակայնորեն, փխրորեն, իրավարի, վրացավարի, սպասողաբար և այլն, տարբեր խոսքի մասերի բայացումը, որը, ի դեպ, վերջին տասնամյակների գեղարվեստական գրականության մեջ լայնորեն տարածված երևույթ է² զառիվերել, ախռաժորել, բարձրա-ծայնել, կարասավորել, թռռնավորել, ասպատավորվել և այլն կամ ություն վերջածանցով կառույցները, որոնք փոխարինում են զոյական կամ ածական + լինել կապակցություններին՝ ծիգություն, սարվորություն, ծիություն, ուլություն, և այլն, ան ժխտականով նորակազմությունները՝ անճարպիկ, անճիգ, անքամի, անծաղրածու, անպատասխանելի և այլն:

Բերենք նշված կաղապարներով կազմված նորակազմությունների գործածությունների մի քանի օրինակ տարբեր ստեղծագործություններից.

«Վրանի ստվերում նստածը մեզ սպասողաբար կոչ արեց»:³

«Աշխոն ցավից մոռացավ հեծվորի ուլությունը» (166-1):

«Սեղրը քամված ու կարասավորված է» (31-2):

«Օսեփանց տղերքը չէ՞ մնում-մնում մի անպատասխանելի խոսք էին ասում» (382-2):

² Տես՝ Ս. Մեյրոնյան, Անմարկներ հայոց լեզվի ռեաբանության, Երևան, 1984 թ., էջ 58:

³ Տես՝ Հ. Մաթևոսյան, Երկերի ժողովածու, Երևան, 1958 թ., հ. 2, էջ 478 (այստեղից շարադրանքում կնշենք օրինակների էջը և հատորը):

«Սիմոնը վերցրեց ձեռնաբեռը և իջավ արահետով» (77-1):

Հրանտ Մաթևոսյանի արծակի շատ հատվածներում խոսքի արտահայտչականությամբ մեծապես նպաստում են հեղինակի ստեղծած և դիպուկ գործածված նոր բառերը:

Այսպես, օրինակ, տպավորիչ է հակածրագիր նորակազմությունը հետևյալ համտեքստում. Ծնակուտը շարունակ ինչ-որ ծրագրեր է կազմում Հովտից առանձնանալու համար, բայց ամեն անգամ ծրագիրը մատնվում է և մինչ քննարկման դրվելը՝ Հովիտը արդեն պատրաստած է լինում իր առարկությունները՝ «արդեն պատրաստի հակածրագիր է ունենում» (380-2):

Հերթավեճը սեղմ ակնարկում է սովորույթ դարձած կենցաղային մի երևույթի մասին. գյուղի միակ, դանդաղահոս աղբյուրի մոտ կուտակվող հերթերին մշտապես ուղեկցում են վեճերը «Հորենական տունը քանի կար՝ աղբյուրն էլ կար... յուր էինք գնում: Օսեփանց ընդհանուր հասարակության աղբյուրում հերթավեճերի մեջ չէինք» (331-2):

Դիպուկ ու բովանդակալից է մառանավոր անսովոր ածականը, որով քնութագրվում է գյուղացի կնոջ կենսակերպը. «Գնալուց հետո չգիտեմք հիշում են թե չէ, բայց թեկուզ մի կենտ անգամ հորանց չեն գալիս-իրենց մաքրությունն ու մառանավոր ապահովությունը ուրիշի տանն ստեղծում ու այդպես էլ մնում են» (374-2):

Խորիմաստ ու ինքնատիպ ոճական հնարանք է նախահեթանոսական նորակազմության գործածությունը «Մեծամորի» դրվագներից մեկում: Բառի ոճական լիցքը առանձնապես մեծանում է խիստ անսովոր ու միայն տվյալ կիրառության մեջ, տվյալ ոճական նպատակաուղղվածությամբ իմաստավորվող նախահեթանոսական քրիստոնեություն բառակապակցությունում: Ակնհայտ է, որ այստեղ գործ ունենք հակադարձ մեանողության հետ, ինչով էլ հենց պայմանավորված է բառակապակցության ոճական արժեքը: Նրանով ընդգծվում է իրական ու կեղծ (ըստ վիպակի գործող անձի տեսանկյան) արժեքների հակադրությունը. ծաղկուն այգին ինչ-ինչ համապատմական նպատակներով թանգարանի վերլուծելու ծրագրի դեմ ուղղված է ժողովրդի մարդու բողոքը.

«Վանքի տակը փորեցին հասան նախաքրիստոնեական մեհյանին: Մեհյանի տակն էլ թող փորեն իջնեն նախահեթանոսական քրիստոնեություն: Դրա տակն էլ թող փորեն հասնեն դարձյալ մեհյանին: Իրենց ինչ է եղել, բա՛հ ու քլունգ էլ ունեն, գիտնական էլ են: Բա իմ խաղողի վազը ես ոնց տանեմ տնկեմ մեհյանի տակի խորանի տակ» (356-1):

Ինչպես տեսնում ենք, Զ.Մաթևոսյանի արձակում նորակազմությունների ստեղծման ոճական շարժառիթներից մեկը բառի միջոցով վերաբերմունք արտահայտելու ձգտումն է: Այս նպատակով ստեղծված բառերը դիպուկ ու սրա-միտ ոճական հնարանքներ են: Նրանց միջոցով հեղինակը հաճախ ոչ թե բացա-հայտորեն ձևակերպում, այլ ակնարկում է խոսողի վերաբերմունքը:

Վերաբերմունք արտահայտելու նպատակադրումը առավել ցայտուն է այն նորակազմություններում, որոնց բաղադրիչներից մեկը լեզվում կայուն փոխաբերական իմաստ ունեցող բառ է, իսկ բառի փոխաբերական իմաստով գործածությունը խոսքի պատկերավորությունը մեծացնող գործոն է:⁴

Այսպես, պաշտոնահաչ, փալասե, անծաղրածու, պարզևախաղ բառերի ընդգծված բաղադրիչները տվյալ նորակազմությունների մեջ են մտել իրենց փոխաբերական իմաստներով, որոնց շնորհիվ էլ տվյալ բառերն օժտվել են ուրույն վերաբերմունքային բովանդակությամբ:

Ահա թե ինչպիսի համատեքստում է գործածված պարզևախաղ նորակազմությունը: Ծմակուտը ամիուսալիորեն դատարկվում է: Եղբայրներից մեկը, որ հովտի տնտեսության ղեկավարն է, ժողովրդին «այստեղից անարգել թողնում է», մյուսը «իր փառքի առաջ կուրացած ու խլացած», այնտեղ ընդունում է քիմգործարան: Երկուսին էլ առաջնորդողը անձնական շահն է, չկա քանդվող տնտեսությունը փրկելու սրտացավություն: Դեռ ավելին, «եղբայրները շքանշանի ոսկի են զնգացնում»: Այնտեղից պարզևատրվել է, այստեղիցն էլ է ուզում «տնտեսությունից պարզև հանել» և կատարում է ոչ միայն անլուրջ թշնամական մի գործողություն. մատղաշը մթերում է: «Կարծում

⁴ Տես՝ հայոց լեզու, I մաս, Երևան, 1980թ., էջ 223:

եր առաջ կբաշեն աառուախառո եղբոր հետ ուրիշ բարձրունքներից կշարունակի» (383-2):

Նկատենք, որ խաղ բառը ունի ևս մեկ փոխաբերական նշանակություն որոշակի նպատակ հետապնդող նպատակադիր գործողությունների շարք: Սխալ չի լինի ասել, թե նշված նորակազմության խնդրո առարկա բաղադրիչը տվյալ դեպքում համատեղում է թե՛ մեկ, թե՛ մյուս փոխաբերական իմաստները:

Իսկ այդ խաղի արդյունքը տնտեսության ամայացումն է, հեղինակի դիպուկ բնորոշմամբ՝ վերածումը հուշատեղերի (ևս մեկ, ոճական լիցքով հարուստ, նորակազմություն). «Փախան գնացին» և մնացած մեկ-երկու մարդը դարձան «գերեզմանոցի ու հին հուշատեղերի պահակ» (382-2):

Հայտնի է, որ գեղարվեստական խոսքում նորակազմություններ են ստեղծվում հաճախ զուտ ոճական նկատառումներով, միայն տվյալ համատեքստում ոճական ինչ-ինչ նպատակներ իրականացնելու համար: Այդպիսի նորակազմությունները լեզվի բառապաշարի հարստացման առումով որևէ նշանակություն չունեն: Դրանք, որպես կանոն, դուրս չեն գալիս համատեքստի շրջանակներից, համագործածական չեն դառնում: Սակայն մեծ է դրանց ոճական արժեքը: Ասվածի տիպական օրինակն է «Մեսրոպը» պատմվածքում հանդիպող կաղամբկտրիչ նորակազմությունը: Այս բառը համատեքստից դուրս որևէ հետաքրքրություն չի ներկայացնում, մանավանդ որ խոսքը կաղամբ կտրելու գործիքի մասին չէ: Գրողը այսպես է անվանում Մեսրոպի դաշույնը, որ Լևոնը գտնում և ներկայացնում է որպես զենք պահելու՝ «դաշաղության» ապացույց: Իրականում դա մի ժանգոտված, դեն նետված իր է, որով կաղամբ են կտրել, կոթատել ու նետել են մառան, որտեղ էլ կաղամբի գլուխների մեջ մնացել է երկար ժամանակ. «ամենդ-ամենդ մտել էր արանքները կարծես թե թուրը ինքը չէր»: Բայց քանի որ կենտրոնից մարդիկ են եկել Մեսրոպի հետևից նացիոնալիզմի մեղադրանքով, ու գյուղի ղեկավարը չի ուզում նրանց «դատարկ ձեռքով ետ դրկել», որպեսզի «կենտրոնի առաջ սևերես չմնա», հիշվում ու մեջտեղ է հանվում այդ նախկին զենքը: «Մեսրոպը տեղն ու տեղը մաքրեց խանչալը, գտավ պատյանը և այդ կաղամբկտրիչից զենք սարքեց՝ որպեսզի մի կարգին իրեղեն ապացույց լիներ» (218-եր., 902. հրատ.):

Նորակազմությունները, որպես կանոն, ոճականորեն լիցքավորված միավորներ են. ոճաբանական գրականության մեջ արծարծվող միտքը, թե գեղարվեստական խոսքում չկան ոճական առումով ընդհանրապես «չեզոք» բառեր⁵, միանգամայն տիպական է հատկապես հեղինակային նորակազմությունների համար:

Հրանտ Մաթևոսյանի արծակում հանդիպում են նաև այնպիսի բառեր, որոնք տվյալ գործածության մեջ հանդես են գալիս մոր, մինչ այդ չունեցած իմաստներով:

Այսպես՝ լեզվում գոյություն ունեցող հյուրատուն բառը սոսկ պատմաբառ է և էդ. Աղայանի բառարանում բացատրված է այսպես. «արքունիքին՝ վանքին կից տուն, որտեղ իջևանում էին ուղևորները կամ ուխտավորները»: «Աշնան արևի» հերոսուհիներից մեկի խոսքում այս բառը ծեռք է բերել «հյուրընկալ տուն» իմաստը.

«Հորաքույր Մանիշակը ես լույս աշխարհի էր մտել աստծու անեծքը սև ամպի նման գլխին... բայց ես ամբողջ Ծանկուտում նրա ընտանիքից լավ հյուրատուն կա՞ր» (40-2):

Մարդոդդի բառը, ըստ մույն բառարանի վկայության, կրոնական բառապաշարից է և նշանակում է Քրիստոս: Մինչդեռ Աղունի խոսքում (Աշնան արև) այն պարզապես արտահայտում է մարդ բառի սուբյեկտիվ ընկալումներից մեկը՝ «բարոյական ու մտավոր բարձր հատկություններով օժտված անձնավորություն».

«Հարսը եթե մարդոդդի եղավ՝ Արմենակը մերն էլ է, եթե չեղավ՝ այդ տղային ոչ ծնել ես, ոչ սնել» (11-2):

Բերված համատեքստում մույն իմաստը հաջողությամբ կարտահայտեր նաև մարդ_բառը՝ շնորհիվ իր՝ հանրորեն գիտակցված սուբյեկտիվ բովանդակության: Սակայն անկասկած է, որ քննության առարկա նորակազմությունը առավել տպավորիչ է և դիպուկ: Մարդոդդի-ն նախ թարմ է, անսովոր, ապա և բնույթով առավել ժողովրդախոսակցական է: Նշենք նաև, որ վիպակում այս բառը գործածված է մեկից ավելի անգամներ:

⁵ Տես՝ Լ. Եզեկյան, Հրանտ Մաթևոսյանի արծակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Եր., 1986, էջ 28:

Կենդանախտ բառը միայն հետևյալ իմաստը ունի՝ կենդանիներից մարդուն անցնող հիվանդություն: Հ. Մաթևոսյանի խոսքում այս բառը խոսքային իրադրության թելադրանքով ձեռք է բերել նոր իմաստ՝ հիվանդության տեսակ, որը բնորոշ է միայն կենդանիներին, մարդուն հատուկ չէ: Մանավանդ, որ այստեղ խոսքը վերաբերում է կենդանիների հետևյալ հատկությանը. մեկ բնակլիմայական, աշխարհագրական պայմաններում ապրող կենդանին մեկ այլ վայրի չի հարմարվում և հիվանդանում է:

Գերասիմի երեխան (Թափանցիկ օր) հիվանդանում է մի անհասկանալի հիվանդությամբ, որը, ինչպես հետո պարզվում է, նրա մեջ հարուցել է հայրենիքի կարոտը: Հայաստանից դեպքերի բերումով հեռացած Գերասիմը Թավրիզում իր համար ապահով ու հանգիստ կյանք է ստեղծել և կարծում է, թե այլևս երբեք ձգտի հայրենիք. «Այս իմ դարպասն է, այս իմ տունն է, այս իմ բարձն է, այս՝ իմ կինն ու երեխաները:

- Հայաստանը դեռ կա՞, իր տեղու՞մ է»:

Սակայն արյան կանչը նախ որ որդու, ապա նաև իր մեջ մի տարօրինակ ու անդիմադրելի մղում է առաջացնում՝ հայրենիք վերադառնալու երազանք:

«Հայաստանը կար, պարտավոր էր լինել, որովհետև որդին ահա հիվանդացավ հայրենախտով: Տեր աստված, տեր աստված...աշխարհում հազար տեսակի ցավ ու հազար էլ դեղումար կա, իսկ լակոտն ահա հիվանդացավ հայրենախտով: պարսկական վագրն օրինակ չի ապրի, ասենք թե, Գերմանիայում և այլն, բժիշկը դեղեր տվեց և ասաց, որ դրանք սուտ բաներ են, երեխային իր հայրենիքն է բուժելու» (341-1):

Եվ ապա, «Եվ Գերասիմը տեսավ, որ, չէ, կենդանախտով միայն երեխան չի հիվանդ» (342-1): Բժիշկն ասաց, որ դա կենդանական հիվանդություն է, մարդու հիվանդություն չի,

Ինչպես տեսնում ենք, կենդանախտ-ը այստեղ իրադրական նորակազմություն է, այնպես ինչպես համատեքստի մեկ այլ՝ հայրենախտ-նոր բառը, որը ոչ միայն դիպուկ է ու տպավորիչ, այլև ամփոփ ու տարողունակ այն առումով, որ նրանով արտահայտվում է պատմվածքի գաղափարն ու ասելիքը:

Գրողի ստեղծած նոր բառերը, սակայն, միևնույն արժեքը չունեն թե՛ ոճական հագեցվածության, թե՛ լեզվի բառապաշարի հարստացման գործում ունեցած նշանակության տեսանկյունից: Դրանք նույնական չեն նաև առաջին տպավորության առումով: Ա. Գվոզդևը նկատում է, որ նորակազմությունները միմյանցից տարբերվում են ցայտունության աստիճանով, որոշ մասի նոր լինելը անմիջապես աչքի է զարնում, մյուսները հազիվ են առանձնանում համատեքստի մնացած բառերի ֆոնից:⁵

Վերջինները սովորաբար այն բառերն են, որոնք լեզվում ազատորեն կարող են կազմվել ցանկացած պահի՝ ամենօրյա հաղորդակցության ընթացքում: Դրանք լեզվաբանորեն որակվում են ներուժունակ (պոտենցիալ) բառեր: Այդպիսիք հնարավոր է, որ համեմատաբար թույլ լինեն ոճական արժեքով, սակայն ընդհանրաճառ, տարածվելու համալեզվական դառնալու մեծ հավակնություններ ունեն: Այսպես, եթե վերը քննված գյուղամուտ, աղբրագլուխ, կավճաբիծ, մեղվատեր, ալրապարկ և այլ բառեր համատեքստում դժվար են նկատվում ըրպես նոր բառեր, քանի որ ինչ-որ տեղ սովորական անվանումներ են, առանձնակի ենթատեքստ չեն պարունակում և կառուցվածքով էլ տիպական են, ինչի շնորհիվ էլ հեշտությամբ կարող են անցնել ընդհանուր-համագործածական ոլորտ, ապա փետածեծ, միրհարան, մեղրամառ, պաշտոնահաչ, պարզախաղ, եղնուհի և շատ այլ բառեր մշտապես կմնան որպես հեղինակային նորակազմություններ: Այսպիսիք, եթե լեզվի բառապաշարի հարստացման առումով որևէ նշանակություն չունեն, ապա որպես կանոն օժտված են առավել զորեղ ոճական արժեքներով քան առաջինները: Կասկածից դուրս է, որ նոր բառը որքան անսովոր է, ցայտուն, նույնքան էլ տպավորիչ է ու ներգործուն: Նմանապես անվիճելի է տեսաբանների այն կարծիքը, որ նման նորակազմությունների չափից ավելի մեծ կուտակումը վնասում է խոսքի արտահայտչականությանը, լեզուն դարձնում է խրթին, խճողված, մեծացնում է շարադրանքի անմատչելիությունը:⁶ Դ. Մաթևոսյանի նորակազմությունների գերակշիռ մասը ներուժունակ բառեր են, իսկ դիպվածայիններն էլ հիմնականում ոճականորեն պատճառաբանված են տեղին ու անհրաժեշտ:

⁵ См. А. Гвоздев, Очерки по стилистике русского языка, Москва, 1965 г., стр. 102.

⁶ Հմմտ. Հ. Հարությունյան, Գեղարվեստական խոսք, Երևան, 1986 թ., էջ 113